Վերոնշյալ նորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո գործում առկա 2023թ. ապրիլի 7-ի թիվ E23/00282, 2023թ. ապրիլի 7-ի թիվ E23/00281 և 2023թ. ապրիլի 7-ի թիվ E23/00280 Երաշխիքների պատճենների, որոնց 1-ին կետի համաձայն՝ *սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/6Շ (Չափաբաժին 1, 2, 3) ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին ՏՄՀՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում,* համադրմամբ, հետազոտմամբ և գնահատմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորումները և «Եվրոբուդ պլյուս» ՍՊ ընկերության և «Տարա զրուպ» ՍՊ ընկերության միջև 2023թ. ապրիլի 6-ին կնքված համատեղ գործունեության մասին թիվ 10 պայմանագրի 2.3. կետը, Դատարանը եզրահանգում է, որ վերոնշյալ երաշխիքերն անկախ այն հանգամանքից, որ «Եվրոբուդ պլյուս» ՍՊ ընկերության և «Տարա զրուպ» ՍՊ ընկերության կոնսորցիումի մասնակիցներից միայն «Տարա զրուպ» ՍՊ ընկերության տվյալներն են պարունակում, հանդիսանում են պատշաճ հայտի ապահովումներ, հետևաբար՝ «Եվրոբուդ պլյուս» ՍՊ ընկերության և «Տարա զրուպ» ՍՊ ընկերության կոնսորցիումի կողմից ներկայացված հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող պատշաճ միջոց:

Ամփոփելով՝ Դատարանը եզրահանգում է, որ ներկայացված հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

Դատական ծախսերի բաշխման հարցը

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայցը ենթակա է մերժման, իսկ Հայցվորի կողմից նախապես 100,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, Դատարանը եզրահանգում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Կապավոր» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք՝ «Եվրոբուդ պլյուս» ՍՊ ընկերություն և «Տարտ զրուպ» ՍՊ ընկերություն՝ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/6Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 4-րդ կետը՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

<u>Ծանոթություն</u>: վճիռը մտել է օրինական ուժի մեջ
« » _____ 2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ